Զ. ՏԱՐԻ — ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 20 ՕԳՈՍՏՈՍ 1903 — ԹԻՎ 544

ՇԱՐԺՈՒՄ

ԻՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀԱՐ ՏՊԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

ԳԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »

Ամերիկայի համար
Տարեկան 3 տլր.
Վեցամսեայ 1.50 »

Ծանուցման յողը առաջին երեսին համար տող 40 ս. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեք անգամ առնելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

Վաճառքի համար ձեռք 10 սանթիմ

Նամակ և դրամ դրկել խմբագրութեան հասցեին.

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Charjoum“ Varna (Bulgarie)

Արտասահմանի համար ձեռք
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռք
)(15 ՍԱՆԹԻՄ)(

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՄՈՎ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

ՄԵՆՔ ԵՒ ՌՈՒՍՆԵՐԸ

Ա.

«Հրէաները և Մենք» խորագրով յօդուածների վերջում առացինք որ Ռուսահայ դժգոհ տարրի Ռուս սոցիալիստների հետ միանալը ՁԱՍԱԿԱՐ է հայութեան համար և խոստացանք այդ ՁԱՍԻ մասին խօսել։

Նախ ընդունենք իբր անպայման ճշմարտութիւն որ Ռուս ներկայ միապետական կառավարութիւնը Հայի գոյութիւնը թէ Կովկասում և թէ իր սահմանակից Տաճկաստանում բացարձակ ՁԱՍԱԿԱՐ է գտնում իր տիրապետական ձգտումների և ապագային անհանգիստ լինելու պատճառով։

Երբէք չը մոռանանք Լօրանովի ասած խօսքերը Հայկական ջարդերի միջոցին «Մենք ուզում ենք Հայաստանը գրաւել առանց Հայի». խօսքեր, որոնք որոշ կերպով յայտարարում էին թէ՝ Թուրքը մեր եղբայրներին ջարդում էր Ռուսի գիտակցութեամբ։

Կասկած չկայ և նրանումոր Ռուս կառավարութիւնը մեծ հաճոյք կզգար եթէ այսօր Կովկասում Հայ չը լինէր. այդ հաճոյքը այնքան բուռն է, որ Ռուս կառավարութիւնը այսօր նախ ամէն կերպ աշխատում է Հային սեղմել, թուլացնել. իսկ յարմար պարագային, մեր կողմից ոչ է գրական ըմբոստութեան նշան տեսած միջոցին, չի վարանի և խիստ պատժել սրով ու հրով։

Ուստի յայտնի չէ որ Ռուսը նոյնքան գաղտ է դէպի միապետականութեան դէմ դժգոհ տարրերը, որչափ և կարմիր Սուլթանը։

Վերջի տարիների ուսանողական, բանուորական և փոքր չափով գիւղացիական շարժումների միջոցին Մոսկվայի, Պետերբուրգի, Կիէվի և այլ քաղաքների փողոցները ներկվեցին ըմբոստների արիւնով, որոնք միայն խաղաղ ցոյցեր էին անում։ Կօզակները չարդեցին, ծեծեցին, սպանեցին բազմաթիւ ուրիուասարդների և օրիորդների։ Բանտերը և աքսորավայրերը լցվեցին Ռուս ծաղիկ և մտաւոր ուժերով։ Ու այդ միայն նրա համար, որ Ռուս դժգոհ տարրը առանց զէնքի փողոց էր դուրս գալիս, իր դժգոհութիւնները յայտնելու ցարի կառավարութեան դէմ։ Ուրեմն պէտք է անպայման կերպով հաւատալ թէ, երբ Ռուս դժգոհ տարրը աւելի ըմբոստ քայլեր առնի, այն ժամանակ տեղի պէտք է ունենան և կոտորածներ. գլուխները պէտք է հնձվեն խոտի նման, որովհետև Ռուս միապետութիւնը, ինչպէս ամէն միապետական իշխանութիւն. առանց մեծաքանակ արիւն թափելու, առանց իր վերջին ուժերը թափելու անձնատուր լինել չի կարող։

Յայտնի է և այն որ Ռուս կառավարութիւնը աւելի գաղտնաբար է վարվում իր հպատակ օտար ցեղերի հետ, երբ նրանք յանդգնում են գլուխ բարձրացնել։ Չը մոռնանք Լեհական ջարդերը, չը մոռնանք Կովկասի լեռնցիների ջարդերը, ընկճվելուց մի քանի տարի յետոյ, չը մոռնանք երկու տարի առաջ տեղի ունեցած Անդիժանի ջարդերը. ուրեմն նոյն սարսափելի ջարդերը տեղի կունենան և Ռուսահայերի վերաբերմամբ, երբ ռուս բռնակալութիւնը համոզվեց թէ Ռուսահայը բացարձակապէս միացած է Ռուս յեղափոխականների հետ. մանաւանդ որ Հայութեան ՉՆՉՈՒՄԸ Ռուսական միապետութեան փայփայած տենչերից մէկն է։ Բայց մեր բանուորների դատը այդքան խոշոր նշանակութիւն ունի՞, համեմատած մեր ազգային գոյութեան հետ, որ մենք այդքան խոշոր վտանգները յանձն առնենք։ Մանաւանդ երբ համոզված ենք, թէ նախ Ռուսական միապետութիւնը երեւակայածի չափ չուտով չի տապալվի. երկրորդ որ Սահմանադրական Ռուսաստանն էլ մեր ազգային ընդհանուր ձգտումներին բաւարարութիւն չի տայ. երրորդ որ Ռուս յեղափոխականները առանց մեր աջակցութեանն էլ, ժամանակը հասած միջոցին, պէտք է կարողանան տապալել ցարիզմը։

Ուրիշ խնդիր, եթէ մենք մեր առջեւ չունենայինք հայ ազգի ինքնուրոյն գոյութեան խնդիրը. ուրիշ խնդիր՝ եթէ միայն ռուսահայերս գոյութիւն ունենայինք և վերջնականապէս հաշտված լինէինք յաւիտենապէս ռուս քաղաքացի լինելու մտքի հետ։ Մեզ թվում է թէ ռուսահայ այն սոցիալիստները, որոնք այսօր ամէն ճիգ թափում են Կովկասում գտնված բանուորների մէջ մեռցնել ազգայնական ձգտումները ու զգացմունքներն, ու դրա տեղ աճեցնել դասակարգային շահերի նեղ զգացմունքները, իրանք հաւատ չունեն ընդհանուր հայութեան ապագայի վրայ և դրա համար մի տեսակ անդիտակից ոճրագործներ են հանդիսանում ընդհանուր հայութեան դէմ, հայ բանուոր դասակարգի ուշադրութիւնը և տրամադրութիւնը Տաճկահայաստանում կուռող ժողովրդից արհեստական կերպով շեղելով դարձնում են դէպի ընդհանուր ռուսական գործը։

Մենք համոզված ենք որ ներկայումս աշխարհի մէջ գոյութիւն ունեցող կարեւոր սոցիալիստներից ոչ մէկը իր ազգի գոյութեան խնդիրը չէր զոհի բանուորական շահերին։ Մի թէ՝ բէլ իր ժողովրդին ու հայրենիքին գոյութեան վտանգ սպառնած միջոցին երբէք չէր համաձայնիլ քարոզել գերմանացի գործաւորներին որ միանան իրենց թշնամի ֆրանս. հասարակապետութեան հետ, Գերմանիայի ներկայ վարչական կազմակերպութիւնը փոխելու համար։

ՎԱՐԴՕ

(Շարունակելի)

ՌՈՒՍԻՈՑ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԸ

Բեղերսպուրկի ներքին գործոց նախարարութիւնն Ռուսահայ եկեղեցիներու վանքերու և բարեգործական հասարակութիւններու կալուածներուն վերաբերեալ հրամանագիրը՝ երկու օրինակ ղրկած է Ս Էջմիածին, մէկը Ս. Սինոդին և միւսը Պրոկուրորին, (կառավարութեան ներկայացուցչին) Ս. Սինոդին ղրկուած հրամանագիրը Պրոկուրորին ղրկուած ծրարին մէջ էր։ Պրոկուրորը պաշտօնապէս Ս. Սինոդին ներկայեց հրամանագիրը, բայց որովհետև Ս. Հայրապետը Էջմիածին չէր գտնուէր, Սինոդը մերժեց ընդունիլ. մինակ Սինոդականներէն Տ. Մխիթար վարդապետ առաջարկեց ընդունիլ իբրև կառավարական հրամանագիր մը, և անմիջապէս աղերսագիր տալով անոր բարեփոխումը խնդրել։

Սինոդը դեռ որոշում մը չէ տուած. Աղեքսանդրապոլէն հասաւ Ս. Հայրապետը, որուն ներկայանալով Պրոկուրորը հրամանագիրը մատոյց և բացատրութիւններ տալով ջանաց համոզել։ Ն. Ս. Օծութիւն, բնաւ չի պատասխանեց և անմիջապէս նիստի հրաւիրեց Սինոդը։ Եաքը՝ գումարուեցաւ նաև ամբողջ միաբանական ժողովը որուն մէջ կարդացուեցաւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանէն հասած այն գիրը որով տեղեկութիւն կ'ուզուէր կալուածական խնդրոյն վրայ։

Յետոյ հասաւ նաև պատրիարքական այն հեռագիրը որով կը հարցուէր թէ ի՞րաւ է Սրբազան հայրապետին հրաժարականը։

Ն. Ս. Օծութիւնը վերապահած է իր որոշումը այն պարագային երբ իր դիմումը չընդունուի։ Տփխիսէն հասաւ Կալիցին իշխանին մէկ նամակը որով Սինոդէն կը պահանջէ ամէն քաղաքի հոգևորականներուն և եկեղեցական վարչութիւններուն ծանուցանել որ գործադրեն նոր հրամանագիրը և ամէն կալուած յանձնեն ռուս պատկանեալ իշխանութեան։

Բոլոր եկեղեցականներն և աշխարհականները յուզուած են։ Տօքթորներ, իրաւագէտներ, փաստաբաններ, ատենաբաններ, Ս. Էջմիածին կուգան խորհուրդ տալու համար որ նոր կարգադրութիւնը չընդունուի իր արդի ձեւին մէջ և աղերսագիր մատուցուի սոյն մտօք։

Սրբազան հայրապետը ամէն կողմէ եղած դիմումներուն կը պատասխանէ թէ. չի պիտի ստորագրէ կարգադրութիւն մը որ հակառակ ըլլայ եկեղեցիին շահերուն։

Արտատպուած «Մանզումէ»էն

ԱԶԳԱՅԻՆ ԿԱԼՈՒԱԾՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Այս համարում մեր ընթերցողները կը կարդան «Մանղումէ»ից արտատպված յօդուածը, որից երևում է թէ մեր ծերունի Հայրապետը առ այժմ չէ ստորագրած Ռուս կառավարութեան ղրկած թուղթը, եկեղեցապատկան կալուածները յանձնելու համար, ու տրամադրութիւն էլ չունի ստորագրելու։ Նոյն յօդուածից երևում է նաև որ Կովկասի Հայութեան մէջ բաւական իրարանցում կայ այդ խնդրի մասին ու շատ ինտիլիգէնտ մարդիկ շտապում են Կաթողիկոսին խորհուրդներ տալու։ Անցեալ օրվայ ուսանողական կոչն էլ ապացուցեց որ Եւրոպայում գտնվող հայ երիտասարդութիւնն էլ մեծ տագնապի մէջ է և միջոցներ է որոնում Կաթողիկոսի և Սինոդի վրա ազդելու որ իրենց ձեռքովը հայ ժողովրդի հարստութիւնը չը յանձնեն Ռուս կառավարութեանը։ Տագնապի մէջ է նաև Վառնայի հայ հասարակութիւնը։ Ուրեմն պէտք է շտապել բոլոր այդ դժգոհութիւններին մի կերպ մարմնացում տալ և հասցընել Կաթողիկոսի ու Սինոդի ականջներին։ Բայց խնդիրը բաւական լարդ լինելով՝ խմբագրութիւնս որոշեց նախ Վառնայի մի քանի բանիմաց և դէպի ազգը սրտացաւ անհատների մասնաւոր խորհրդակցութեան հրավիրել, հապա գործին հրապարակային կերպարանք տալ։

Այդ հրաւէրը կուղարկենք շաբաթ օրը։ Ցուսով ենք որ այն ազգայինները, որոնց պէտք է ուղղվի մեր հրաւէրը, անտարբեր չեն գտնվի դէպի մի խնդիր, որը շօշափում է ոչ միայն ազգային նիւթականը, այլ և բարոյականը։

Ժողովրդների կեանքերի մէջ պատահում են դժբախտութեան րոպէներ, ուր ամէն մի անհատ ցնցվում է իր ազգին հասած ծանր հարուածից։ Ռուսական վերջին հարուածը ծանրագոյն հարուածներից մին է և աւելի վտանգաւոր, որովհետև վերջինը չը պէտք է լինի, եթէ մենք լուռ մնանք։ Պէտք է ամէն ճիգ թափել Նրան կասեցնելու։

Խմբագրութիւն

ՎԻԺԺԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

Դեռ անցեալ 1902 տարուայ «Դրօշակի» 10րդ համարում ազդարարուեց, թէ նոյն տարուայ ապրիլի 10ին, Հ. Ց. Դ. Արևմտեան Բիւրօի և Կ. Պոլսոյ պատասխանատու կեդր. Կոմիտէի վճռի համաձայն, Բաթում քաղաքում տեղւոյն է ենթարկվել Երզնկայի, Էրկան գիւղացի, 28 տարեկան, սափրիչ Մելքոն Փէքսեան, որը 1896 թ. էն ի վեր Դաշնակցութեան պատկանող 10 հրացանները իւրացրած և անհայտացած է եղել և թէ՝ ահաբեկիչները ազատ են։

Ուրեմն օգոստոս 3 ին, Դալաֆաուում տեղի ունեցած տեռորը երկրորդն է իր տեսակում։ Յեղափոխական մարմնին պատկանած զէնքերի գողութեան համար զեղծարարները մահուան են ենթարկուում։ Եւ միթէ՞ այդ հատուցումը չափից դուրս ծանր անիրաւ նոյն իսկ հակամարդկային չէ։ Ինչ որ տասը հրացանների համար արժէ՞ զոհել մի հայի կեանք մի քանի անձնուրաց յեղափոխականների կեանքն էլ վտանգի ենթարկելով։ Այս կենսական հարցը լուսաբանելու համար, նախ պէտք է բացատրել մի քանի այլ կարևոր հանգամանքներ, որոնց հետ դա անքակտելի կերպով կապած է, պարզաբանել մի երկու ուրիշ պայմաններ, որոնցից այդ հարցը ծագում է ստանում եւ կամ նրանց անպայման հետեւանքն է։

Ո՞րտեղից է յառաջանում զէնքի պահանջը մեզանում եւ ինչ է նրա դերը, նշանակութիւնը մեր ժողովրդի ներկայ հասարակական կեանքում։

Հասարակութիւնների, կամ աւելի ճիշդ ազգերի զարգացման դեռ նախնական շրջաններում, կեանքի պայմանների եւ անհատների հաւաքական գործունէութեան յպահանջի հետեւանքով, համայնքների մէջ աշխարհաժեշտօրէն ստեղծուել են ընկերային որոշ յարաբերութիւններ ու պարտականութիւններ։ Դրանց որոշումը, չափն ու սահմանը կախուած են եղել կեանքի զանազան պահանջներից, տնտեսական, աշխարհագրական ու շրջակայ ցեղային միջավայրերի պայմաններից, կուլտուրական զարգացման աստիճանից եւ այլն։ Մի հասարակութեան անդամների ընկերային յարաբերութիւնների զարգացումը ցոյց է տալիս այդ հասարակութեան անդամների՝ մարդ անհատների բարձրութիւնը եւ յատկանշում է նրա հասարակական կեանքի պահանջներն ու պայմանները, պարզում է նրա ուղղութիւնը, նրա կանգնած հողի ամրութիւնը եւ նրա անխուսափելի ապագան, վախճանը։ Ընդհանուր ազգերի քաղաքական ու սոցիալական կեանքի պատմութիւնը անհամար օրինակներ ու փաստեր է տալիս որպէս ապացոյց սրան։ Վերցրէք հին, միջին կամ նոր դարերի պատմութեան միջից ո՞ր ազգի կամենում էք անցեալը։ Այնտեղ՝ հասարակական այն շրջանակներում, ուր ընկերային յարաբերութիւնները որոշ բարձրութեան մէջ են գտնվել, յայտնութիւնն ու յառաջդիմութիւնը անպայման աւելի զօրեղ են եղել, քան նուազ բարձր շրջաններում։ Մենք ասացինք որ դրա մէջ մեծ դեր են խաղում եւ բարոյական, տնտեսական, կուլտուրական եւ այլն պայմանները։ Իսկ եթէ փոխուեցին, ընկան այդ յարաբերութիւնները — պիտի փոխուին, ընկնին նաեւ հասարակական այդ միւս ազդակները, պիտի փոխուի նաեւ կեանքը յատակից՝ դառնալով մի տաժան, անտանելի բեռ, որը իր ծանրութեան տակ գուցէ եւ կուլ տայ մի օր ճնշուածի գոյութիւնը։ Հին դարերում մանաւանդ, երբ փոխանակ կուլտուրական նուաճման՝ բռնի ոյժի, թրի եւ աւերմունքի նուաճումն էր թագաւորում—բոլոր անցկացրած, խպառ ոչնչացրած ու անհետացած ազգեր ու համայնքներ շատ է յիշում պատմութիւնը իր էջերում։

Վերցրէք սակայն հին Ցունաստանը, յոյն համայնքը, ոչ իր այժմեայ դրութեամբ, այլ Քրիստոսից հինգ դարեր առաջ, երբ տգիտութեան համատարած խաւարում իր կուլտուրական զարգացմամբ եւ քաղաքացիական կազմակերպութեամբ նա բարձրանում էր որպէս հպարտ լուսատու փարոս։ Դարեհի տնթիւ եւ Քսերկսի 1,700,000 հոգուց բաղկացած այլացեղ, կիսավայրենի եւ անմշակ խառնիճաղանճը ցրուում, փախչում էր հելլենական, փոքր բայց ամփոփ եւ իրար հետ սերտ միացած ոյժերի առաջ։ Մանկութիւնից վերանի տակ մեծացած Սպարտացուն միայն մահն էր պոկում իր ընկերից կուի դաշտում։ Այդ դարերում կեանքի ամենակենսական պահանջը կուի ընդունակութիւնն ու պատրաստականութիւն էին, բայց եւ այնպէս այդ իսկ ժամանակաշրջաններում դա կախուած էր լինում էլի կուլտուրական զարգացումից, տընտեսական եւ ընկերային պայմաններից։ Շնորհիւ այդ հանգամանքներին Ալեքսանդր Մակեդոնացու ան յաղթելի «Ֆալանգան» Փիւնիկեցոց Միլէտ եւ յունաց Ալիկառնաս քաղաքների գրաւման համար աւելի երկար ժամանակ թափառեց նրանց պարիսպների տակ, քան ընդհանուր Պարսկաստանի եւ Ասորեստանի գրաւման միջոցին։ Նոյն ժամանակվայ Պարսկաստանում ընկերային յարաբերութիւնների մասին յիշելն ան զամ անմտութիւն կը լինէր, քանի որ այդ հսկայ պետութեան ահագին նահանգներում դեռ միութեան կանոնաւոր կապ գոյութիւն չունէր։

Նոյնն է կրկնվում նաեւ Հռովմայեցւոց տիրապետութեան օրով Գալլիոյ (ներկայ Ֆրանսայի), Սպանիոյ եւ Գերմանիոյ հարաւային արեւմտեան անհամար ցեղերից քանիսն է՛ կորել, չքացել, տրորուել Ցուլիոս Կեսարի լեգէոնների ոտների տակ, կամ հռովմէական կուլտուրայի անդիմադրելի հոսանքում։

Միջին դարերում Ֆէօդալիզմի տապարը, պապական ու կրօնական երկպառակութիւնները, նրանց լուռ սնրագործութիւնները, խաչակիրների եւ այլ երկարատեւ արիւնհեղ պատերազմները, եւ վերջապէս դրանցից յետոյ յառաջացած միապետական հզօր բռնակալութիւնները, այս բոլորը, որպէս յետադիմական թունաւոր ուժեր, պողպատեայ կապանքներով կաշկանդել էին մարդկային մտքի, գաղափարի, կուլտուրայի զարգացումը։ Սակայն դրանք էլ փշրուեցին ժամանակի հոսանքում, կրկին նրա պահանջների ստեղծած երկաթեայ ֆակտօրներով։ Իսկ տասնեւութերրորդ դարի վերջերում տեղի ունեցած ֆրանսական յեղափոխութիւնը, որի հիմնական պատճառները պէտք է փնտռել Ֆրանսիացու տընտեսական, կուլտուրական եւ քաղաքական կենցաղի խղդող մթնոլորտում եւ որի այլիքները տարածուեցին շատ ու շատ հեռուները—յեղաշրջեցին ընդհանուր Եւրոպայի ապագան։ Դրանք անխուսափելի էին կեանքի այդ պայմաններում։

Վեր առնենք միջնադարեան կաթոլիկ կրօնական իշխանների ընթացքը։ Նրանք՝ չը նայած այնքան հարուստ ու բազմամարդ կազմակերպութիւններին, մասնաւոր ժամանակներում իրանց ունեցած յաջող հոսանքներին և նոյն իսկ իրանց ձեռք բերած կարճատև քաղաքական իշխանութեան, անընդհատ պարտութեան հարուածներ էին ստանում։ Ոչ եզիպտական լեգէոնները, ոչ ինկուիզիցիան, ոչ գրաքննութիւնը և ոչ էլ անչափ արիւն-արտասուքը որ հոսեց նրանց ձեռքերով, չը կարողացան հասցնել պապականութիւնը իրանց բաղձալի իդէալին։ Իսկ սրանից յետոյ, պարզ բան է, որ յոյս է՛լ չկայ հասնելու։ Վերջին հարուածը նրանք Ֆրանսեայում դեռ երէկ ստացան կօմբից։ Ինչու՞ սակայն այս անյաջողութիւնն ու յետադիմութիւնը։ Չէ՞ որ նրանք փափագում էին մարդկային կեանքի անդորրութիւնը, քարոզում ճշմարիտ ուղին, բարձր ձգտումներ, ազնիւ զգացումներ։ Ոչ։ Նրանք ճշմարտութեան և իրաւունքի անունով իսկ և իսկ բռնակալութիւն էին հաստատում։ Նրանց նպատակը չէր բղխում ժողովրդի ցաւերի ու շահերի աղբիւրից, քանի նրանց ազդակների ու կազմակերպութիւնների ընկերային յարաբերութիւնները հիմնվում էին հալածանքի և հաւատաքննութեան պէս անխիղճ ու հակամարդկային միջոցների վրայ։ Ուրեմն կամ հէնց նրանց գործունէութիւնը բացասական էր և կամ միևնոյն ժամանակ ստեղծում էին դերակշիռ հակառակ ոյժեր։ Ազդակներ։ Աւելի՝ զիզն անչուշտ վերջի հանգամանքն է, որովհետև ուրիշ պարագաներում էլ նոյնն է տեղի ունենում, երբ ճնշող տարրը ինքնաճանաչութեան ոգին կրում է իր կրծքում և գոյութեան կոիւը մղելու բարձրութեան վրայ է գտնվում։ Կաթոլիկական ռէակցիայի մառայ շրջանում, ինկուիզիցիայի գործակալները քանի՛ քանի անգամներ ստացել են իրանց արդար հատուցումը հալածող ժողովրդից։ այն էլ ամենախիստ կերպով։ Ճնշող ոյժի դէմ ճնշուածը ինքն է արտադրում պայքարող տարրը, որի միջոցները կախուած են լինում դարձեալ բռնութեան չափից։ Բռնակալութիւնների դէմ գերի ազգերը իրանց գոյութեան կուի վճռական լոպէներին միջոցների մէջ խտրութիւն չեն դրել, մարտնչել են զէնքով ու ամենայն կատաղութեամբ մինչև ստեղծեն իրանց համար մարդկային կենցաղի տանելի վիճակ և ազատ զարգացման յոյսեր ներընկող պայմաններ, կարծում ենք, պատմական օրինակներ յիշելը անտեղի է, որովհետև դրանք շատ անգամներ են յիշուել, դրանց մասին շատ է խօսուել և առանց այն էլ արդէն մենք բաւական հեռացանք մեր իսկական հարցից, նի՛թ։ Մէկխօսքով՝ բոլոր հեռու և մօտ անցեալում ազատուած ազգերը, հասարակութիւններն ու ցեղերը անց են կացել կոիւների արիւնալի շրջանը։ Կոպիտ, բռնի նուաճման վախճանը միշտ զէնքն է դրել, երկրին ազատութիւն միշտ զէնքն է պարգևել։ Իսկ այնտեղ ուր նուաճումը այլ կերպ է եղել — բոլորը, ցասումն ու պայքարն էլ գնացել են այլ ճանապարհներով։ Գերմանիոյ և Ռուս կառավարութիւնը կուլտուրական նուաճում են տանում այսօր լեհացիների դէմ։ բայց և այնպէս լեհացիներն էլ անօրինակ տոկունութեամբ պայքարում են կուլտուրապէս։

Սատկացան նուաճման միջոցները — պէտք է սատկանայ և կռիւը։ մաքառումը, պէտք է փոխուի նաև

ընդդիմութեան կերպարանքը։ Սրանք այսօր մեր աչքի առաջ կատարուող երևոյթներ են։

Վերջը կը դառնանք Թուրք կառավարութեան տարած նուաճման քաղաքականութեան և մասնաւորենք խօսքներս հայերիս պաշտպանման, պայքարին անհրաժեշտ միջոցների վրա։

Էմիլ Շղարշեանց

ՌՈՒՍԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Բանտարկեալի նամակի շարունակութիւնը)

Պէտք էր որ վերի գալբրիէներէն մէկուն ամբողջ երկարութեամբը և կատղածներուն երկու շարքերուն մէջէն անցնիլ բանտին գետնայարկը հասնելու համար։ Վարը ինձի երեւցան քանի մը կերպարանքներ. բանտապետը, իր օգնականներէն մէկ քանին, բանտին տեսուչն ալ հոն կը գտնուէր։ Սմէնքն ալ կը հսկէին որ իրենց հրամանները ճշդի. կատարեն. բանտի քահանան որ սարսափի և հեռաքրքրութեան խառն նշանները դէմքին վրայ, հոն էր, անշուշտ գործի մը համար (ուրիշները քահանայի ձեռքը խաչ մը ալ նրկատած են)։ Երբ բանտապետին կաղաղակէին «ինչու կը ծեծեն» ան՝ լրբաբար կը պատասխանէր. «ոչ ոք զձեզ չի ծեծեր»։ (ի՞նչ կը նշանակէ այդ լպիրշ բացատութիւնը...)

Մեկի հրեցին դէպի պզտիկ դուռ մը, որ կը տանի դէպի գետնայարկը, ու սանդուխքներուն վրայ սկսան զմեզ աւելի սաստիկ ծեծել, մեր մազերը փետտել...

Վերջապէս զմեզ նետեցին կրամիտով ծածկուած և փոչոտ յատակի մը վրայ. հոն, տեղ տեղ ես տեսայ թէ ինչպէս քանի մը զոհեր, որ հարուածներէն ուժասպառ էին, քարշ կը տրուէին։ Ահա թէ ինչ կը նշանակէին այն ճիչերը զոր ես կը լսէի իմ խցիկիս մէջ գտնուած միջոցին։ Ինչպէս և իմ հեծեծանքներս լսած էին այն ընկերներս, որոնց հերթը մեզմէ աւելի ուշ հասնելու էր. երեք չորս բոպէ շարունակ հետզհետէ, աստիճանաբար, մինչեւ սանդուխքին հասնիլը կրկին կը լսուէին նոյն հեծեծանքները և խօսքերը, «բայց ի՞նչու կը ծեծէք՝ չէ՞ որ չեմ դիմադրեր, աւելի լաւ չէ՞ր ըլլար որ զիս սպաննէիք»։ Մենք նորեկները ընդունեցինք լռութեամբ և լքումով։ Մենք հարուածներէն սպաննուած էինք. ծեծուած էինք ձեռքերով և ոտքերով...

Վերը քսաներ կու հոգի, աւելի ճիշդ քսաներկու դիակ հաւաքուեցանք։ Թիւը ճիշդ է, որովհետեւ քանի մը անգամ զմեզ համրել ստիպուեցան, որպէսզի հետեւ այդ մութը և ջրի հոսանքներով տեղը կը չփոթէին։ Թոյլ լոյս մը պզտիկ պատուհանէն ներս կը թափանցէր. խակուածները տարտղնած էին ամէն անկիւն։ Վերջը դժուար եղաւ զանոնք «ժողովել» բացի մեզմէ ուրիշ հինգ հոգի ալ ուրիշ զնտանի մը մէջ նետուած էին, կսէին թէ ուրիշներ ալ կային մեր վիճակին մէջ, որոնք տեղաւորուած էին խցիկներու մէջ։ Ատիպուած են եղեր երկու թէ երեք հոգի ուղղակի հիւանդանոց ուղղափոխել։

Այդ վիճակի մէջ մենք ստիպուած եղանք երեկոյեան ժամի 7 էն մինչև առաւօտեան տասը պառկած մնալ։ զօրեղ «կուրտեր» մը կար. մանաւանդ առաւօտեան դէմ շատ ցուրտ էր. մեզ շապիկով դռդիս քաշեր էին մեր խցիկներէն. մի քանիին շապիկները կոր կոր եղած էին։ դեռ խցիկներուն մէջ կը ծեծուէին։

Դատէ ինչպէս կուզես, ամէնուն հոգեկան վիճակը նոյնն էր։ Երկար պիտի ըլլայ ամէնը գրել և ինչու՞ գրել։ Այդ վայրկենին ես իմ աչքիս առջևը ստորնացած, խղճուկ և անկարող էի այդ առնասնական և բութ ոսմին առջև, որմէ զմեզ ոչ ոք կրնար ազատել։ Անշուշտ ոչ ոք մեր մասին բան մը գիտէր։ Ո՜հ, ո՞րչափ յաւալի է դահիճին լպիրշ ծաղրանքի առջև անպօրութեան գիտակցութիւնը ունենալ։

Առաւօտեան, երբ աշխատութիւնները սկսելու վրայ էր վարը, ուր հարիւրի չափ խցիկներ պիտի չինուին, զմեզ քարշ տալէն ուրիշ տեղ տարին։ Ժամը տասին հանդէսը սկսաւ. մեզմէն ամէն մին տարուեցաւ բանտի իշխանութենէն կազմուած դատարանի առջև, և հոն մեր պատիժը որոշուեցաւ. չարաթ մը զնդաններու մէջ պահել։ Զնդանի մասին գաղափար ունիս դուն։ Մեր կպատեր են, յատակ, վերէն պզտիկ երդիկ, կերակուրը՝ ցամաք հաց ու ջուր և զրկումն ծնողների հետ յարաբերութիւն ունենալ՝ անորոշ ժամանակով մը, մեծ մասամբ անոր համար որ հարուածներուն և վէրքերուն նշանները անհետին։

Պէտք է կարծել որ այդ խստութեամբ գոհացած են։ Բայց բու է, թոյլ տուր որ չը շարունակեմ...»

ՎԱՌՆՊԻ ՊԱ. ԳԱՄԱՒՈՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆԸ

Կիրակի օրը՝ տեղի պէտք է ունենար առաջնորդ ընտրելու համար Սոֆիա ղրկելիք պատգամաւորի ընտրութիւնը։

Թաղականութիւնը ընտրութեան օրը նշանակել էր Ս. Աստ. ոսնը, երբ սովորաբար անպին բազմութիւն է լինում եկեղեցում. ուրեմն եւ տնագին քանակութեամբ քէ տուողներ պէտք է լինէին եւ ընտրութիւնը իրապէս ժողովրդական պէտք է լինէր։ Հարիւրաւոր քէ տուողներ էին եկել եւ ոչ ոք չէր կարծում որ ընտրութիւնը կը յետաձգվի, որովհետեւ թէ քէէարկուների բազմութիւնը ակնածելի էր եւ թէ առաջնորդական ընտրելիի համար կարծիքների տարբերութիւն չկար։ Բայց բախտը տնօրինել էր որ այդ այդ օրը ընտրութիւնը տեղի չունենայ որովհետեւ ընտրողական գործը կարգադրողներն գիտակցաբար թէ անգիտակցաբար այնպէս քայլեր էին տրել, որոնք դժգոհութեան պատճառներ դարձան, բողոքների տեղի տուին եւ վերջապէս ընտրութիւնը յետաձգվեց ամենավայրենի կերպով։

Մեղաւոր էին թէ ընտրողական գործը կարգադրողները եւ թէ բողոքողները։ Առաջինները նրա համար, որ իրենց գիտակից կամ անգիտակից քայլերով բողոքի պատճառներ ստեղծեցին, իսկ բողոքողները նրա համար որ թոյլ տուին իրենց յարձակուել քէէտուփի վրա խլելու նպատակով. որ չը կարողացան եւ պատռեցին քէէարկուների ցանկը։ Ճակատամարտը փրթելու վրա էր. բարեբախտաբար խոհեմութիւնը, որ այդպիսի պարագաներում անհրաժեշտ է, յաղթող հանդիսացաւ, եւ դպրոցի ու եկեղեցու բակը զերծ մնացին պատերազմի թատերավայր լինելու դերից։

Բողոքի պատճառները հետեւեալներն էին. Նախ ստորագրութեան ցանկը լիովին չէր կազմված, այնպէս որ շատ քէէարկուների անունները չը գտնվեցին. քէէարկուները վիրաւորվեցին որ իրենք այդ ցանկի մէջ չեն գտնվում, թէեւ ծխականի բոլոր պարտականութիւնները կատարում են, ու այդ օրը զրկում են ընտրողի իրաւունքից։

Երկրորդ պատճառը՝ որ Տ. Սարգիս քահանան անուններ էր արձանագրել, պայման դնելով որ ձայն տան Պ. Ս. Գաբրիէլեանին։

Երրորդ պատճառը հանդիսանում էր այն, որ Պ. Ս. Գաբրիէլեանի թեկնածութիւնը հրապարակով չէր գրված եւ ընտրողների մի մասը չի գիտեցել թէ եռանուն ցանկից դուրս ընտրող կայ. եւ ուրիշ պատճառներ որոնք աւելի անձնական հակառակութեան գոյն ունէին, բայց որոնք միանալով բողոքի օրինաւոր պատճառների հետ ստիպեցին ընտրութիւնը անվաւեր հռչակել տալ։ Զը նայելով որ ընտրողական ժողովի անդամներից մէկը յայտարարում է որ արդէն ժամանակը շրջաւոր եւ քէէարկուների թիւը բաւական չէ, որեմն եւ ընտրութիւնը յետաձգվում է, բայց անձնական հաշիւ ունեցողները, որոնց պարագլուխն էր Գուրպէթեանը, գոհ չմնալով այդ յայտարարութիւնից, ժողովրդին յայտարարում է ձեզ-խաբում են. այդ յայտարարութիւնը խաբելու համար է պէտք է տուփը խլել։ Այդ յայտարարութիւնից յետոյ ինքը եւ ուրիշները յարձակվում են տուփի վրա։ Ու սկսվում է լուիկ մարտը յարձակվողների եւ տուփը պահողների մէջ. երկու կողմից էլ տուփը իրար են քաշում, վերջապէս յարձակվողները յաջողում են միայն ցանկի տետրակը խլել եւ պատռել։

Կրքերը լարվում են, Գուրպէթեանը մէջտեղ է ձգում «դրսեցու եւ գաղթականի» խնդիրը, զրգռում ժողովրդին. բարեբախտաբար, ինչպէս վերը ասացինք խոհեմութիւնը յաղթող է հանդիսանում եւ տուրուդմբոց չէ տեղի ունենում։

Ցաւսով ենք որ Թաղականութիւնը երկրորդ անգամի ընտրութեան համար ամեն կերպ կաշխատի նախորդ անկանոնութիւններից զերծ մնալ եւ բողոքի տեղիք չը տալ։

Աւելորդ չենք համարում յայտնել որ Պ. Ս. Գաբրիէլեանի թեկնածութիւնը հետեւեալ կերպով է մէջտեղ եկել։

Մի խումբ երիտասարդներ նախ աշխատել են Պ. Մավեանին համոզել որ խօսք տայ Վահան վարդապետին ձայն չտալ։ Պ. Մավեան այդ խօսքը չէ տուել, յայտարարելով որ ինքը իր անկախութիւնը չի կորցնի։ Պ. Պ. Տամատեան եւ Գրիգոր Վարդանեան բոլորովին մերժել են պատգամաւոր ընտրվել։ Ու երիտասարդութեանը մի մասը տեսնելով որ երեք ընտրելիներից երկուսը հրաժարվում են բոլորովին, իսկ պ. Մավեանը իր անկախութիւնը ուզում է պահել, որոշում է ընտրել այնպիսի մէկին որ պատգամաւորական ժողովին կը ներկայանայ Վառնայի ժողովրդի դրած պահանջներով առաջնորդվելու համար, որովհետեւ ինչպէս վերը յիշեցինք բոլոր Վառնացիք առանց կուսակցական խտրութեան, հակառակ են Վահան վարդապետի ընտրութեանը։

Մի քանի խօսք էլ. բողոքողները առաջ իրենց դատը օրինաւոր կերպով էին մղում եւ այդ օրը ընտրութիւնը վերջացնելու ամենաջերմ փափաքողները իսկ շատ կէտերում համաձայն էին օրինաւոր բողոքողների հետ։ Գուրպէթեանը օգտվելով դրանց բողոքներից ինքն էլ առաջ օրինաւորութեան սահմաններից դուրս չէր գալիս, բայց վերջը ինչպէս երեւում է կրկին կիրքը յաղթող հանդիսացաւ եւ մեծ մասամբ յոյսը իր ատրճանակի վրա դնելով. սանձը բաց թողեց մոռնալով որ այդ պարագայում երբ մարդիկ յանդգնում են ժողովրդի մէջ եղբայրասպանութեան հիմը դնել, ատրճանակով միասին պատառ պատառ են լինում։ Ցաւսով ենք որ միւս անգամ Գուրպէթեանը այդ բնթացքի մէջ չի գտնվի. թէկուզ բոլոր գրպանները ատրճանակով լիքը լինեն։

.....խմբագիր

Պատ. թերթիդ 542 թուահամարին մէջ 5 օգոստոս թուակիր նամակաւ կարդացինք թղթակցութիւն մ, վարժարանաց Հոգաբարձութեան մէկ որոշումը քննադատող։—

Հոգաբարձութիւնս երեք տարի պաշտօնի վրայ ըլլալով, այս տարի արդէն մատուցած էր իր հրաժարականը. բայց հասարակութեան կողմանէ Թաղ. Խորհրդոյ ուղղուած հանրագիր մը և Պ. Ապուզեանի թելադրութեամբ ղրկուած Ուսուցչական մարմնոյն մէկ խնդրագիրը, ստիպեցին զմեզ տարի մը ևս շա-

բունակել մեր պաշտօնը։

Այս տարի ևս Աղչկանց կողմը, կարելի չըլլալով Դ. կարգ կազմել, հարկ տեսնուեցաւ Ուսուցիչներէն մին պակսեցնել։ Բայց ինչու՞ Պ. Դալուստը պահած և Պ. Ապազաեանը հրաժարած, ասոնց պատճառներուն վրայ յարմար չենք դատեր հրապարակաւ բացատրութիւն տալ։ որովհետև արդէն կարծեցեալ երիտասարդական խմբէն երկու պատուաւոր անձեր Հոգաբարձութեանս ներկայացած ըլլալով, իրենց պատշաճ ընդունելութիւնը եղած և հարկ եղած բացատրութիւնները արուած են. այնուհետև ոևէ դիմում չէ եղած և նոյն իսկ եթէ բոլոր եղած դիտողութեանց գոհացում տալ հարկ ըլլար, Հոգաբարձութեանս գործերը անել դրութեան մը մատնել հարկ կըլլար։

Քանի որ ժողովուրդը Հոգաբարձութեան վրայ երեք տարի վստահութիւն ունեցած և անոր ըրածին համամիտ գտնուած է կը կարծենք թէ այս փոփոխութեան ալ համակարծիք է, բաւական է որ Հոգաբարձութիւնը իր ըրածին գիտակցութիւնը ունենայ. իսկ եթէ չունի վստահութիւն, արդէն Հոգաբարձութիւնը պատրաստ է իր գործը թողուլ արժանաւորագոյններուն։

Խնդրելով, մեծ. խմբագիր Տէր, սոյն նամակին հրատարակութիւնը։

Մնանք յարգանօք

Ի դիմաց Հոգաբարձութեան

Ատենադպիր Ատենապետ

Վ. Գուլումճեան Եր. Յակոբեան

(ԿՆԻՔ)

Ռուսճուգ 15 Օգոստոս 1903

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Իզմիրէն Պոլսոյ թերթերուն կը հաղորդեն որ Մելքիսեդէք եպիսկոպոսին կտակը իրօք կեղծուած է հանգուցեալին հարստութիւնը մասնաւորներու սեփականութիւն դարձնելու մտքով։

—Օգոստոս 19 ին Սիսի մէջ հոգին աւանդեր է Կիլիկիոյ կաթողիկոսական նախկին տեղապահ Կիրակոս Արք. Եպիսկոպոս Բէքմէզճեան։ Հանգուցեալը Կիլիկիոյ եպիսկոպոսներէն երիցագոյնն էր և մեծ ջանքեր թափեց որ Կիլիկիոյ աթոռը կանոնաւոր կերպով ընտրուած կաթողիկոս մը ունենայ։

—Գուքրէշի եկեղեցիին հոգաբարձութիւնը պատրիարքին յատուկ գրութեամբ հարցում մը ուղղած է, թէ կարելի՞ է տօնական օրերուն մէջ եկեղեցական երգեցողութիւնը աւելի հրապուրիչ ընելու համար նւագարան գործածել եկեղեցիներուն մէջ։ Պատրիարքը Գուքրէշի հոգաբարձութեան այս գիրը Կրօնական ժողովին յանձնած է։

—Կիմանանք որ Վառնայի թաղականութիւնը որոշած է պատգամաւորին ընտրութիւնը յետաձգել երկու շաբաթով։ Այդ ժամանակամիջոցին մէջ պիտի աշխատուի որ բոլոր քէ տալու իրաւունք ունեցողները արձանագրուին։ Երիտասարդական մը պիտի տարածուի ժողովրդին մէջ բացատրող Սահմանադրութեան ընտրողական յօդուածները և պիտի բացատրուի ժողովրդին որ «դրսեցիի» և տեղացիի խնդիր չը կայ։

—Լուր կը պատի որ Ռուսչուկի ընտրութիւններն ալ յետաձգուած են, որովհետև հոն ալ պատգամաւորական թեկնածուներու անձերը և իրենց տրամադրութիւնները խնդիր դարձած են։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պոլսէն Գերմանական թերթի մը կը հեռագրեն որ հրաման տրուած է զէնքի կոչել Պոլսոյ զօրաբաժինն ըէտիֆներու 8 ըդ. վաշտը։ Ան կապացուցանէ որ Բ. դուռը ա.ելի մեծ դժուարութեան մէջ կը գտնուի քան 1897 թիւն էր։ Բ. դուռը Ամերիկեան Մ. Ն. կառավարութեան յայտարարեր է որ Պէյրութի հիւպատոսին դէմ սպաննութեան փորձ եղած չէ, այլ անոր հանդիպեր են հարսնեւորներ, որոնք ըստ տեղական սովորութեան, զուարճութեան համար ատրճանակներ պարպեր են։

—Գերմ. թերթերը կը գրեն որ Ենի Ատայի փարոսը քանդուած է Մակեդոնացիներու ձեռքով և այսուհետև նաւերը գիշեր ու մարախլապատ միջոցին չը պիտի կարենան այդ կողմերէն անցնիլ։

—Բրիզբէնէ Պելկրատ կը հաղորդեն որ հոն տեղի Ալպանացիները, որոնք թուրքերու կողմէն կը գրգռուին Մակեդոնացիներուն դէմ կռուիլ, որոշած են թուրքերու հանդէպ սպառնական դիրք բռնել։

Մակեդոնացի ապստամբները յաջողեր են շատ մը վտանգաւոր պէյեր սպաննել և անոնց աշտարակները քար ու քանդ ընել։

—Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Ռուս կառավարութիւնը Մակեդոնեան բարենորոգելու նոր ծրագիր մը պիտի առաջարկէ, որը թէ Սուլթանին, թէ Մակեդոնացիներուն և թէ Աւստրիայի պիտի բաւարարութիւն տայ։

Թուրք պաշտօնական թերթը յայտարարած է որ Սուլթանի գահակալութեան առթիւ հրաւիրուած ոչ մի օտարազգի դեսպան չի մասնակցիր։

Ֆրանսական դեսպանը Սուլթանին հրաւիրեր է Ֆրանսական դեսպանատունը։ Սուլթանը ընդուներ է հրաւէրը